ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԴՏՊ Ծ1141.Մ11007/26-2

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ «ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԵՐԵԽԱՅԻ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-ԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «05» «02» » 2026թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Մանգասարյանի (այսուհետ՝ Նախարարություն), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունն, ի դեմս կազմակերպության տնօրեն՝ Ա. Ղուկասյանի (այսուհետ՝ Կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), ՀՀ կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի N1910-Ն որոշման N 5 հավելվածի 7-րդ աղյուսակի 1141 «Երեխաների հիմնահարցեր» ծրագրի 11007 «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին ժամանակավոր խնամքի տրամադրման ծառայություններ» միջոցառման իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

Սույն պայմանագրով Նախարարությունը պարտավորվում է Կազմակերպությանը հատկացնել ՀՀ 2026 թվականի պետական բյուջեով նախատեսված չափաքանակից 248,912,400 (երկու հարյուր քառասունութ միլիոն ինը հարյուր տասներկու հազար չորս հարյուր) ՀՀ դրամ, Կազմակերպությունը՝ պարտավորվում է իրականացնել Կազմակերպությունում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 0-18 տարեկան երեխաների առավելագույնը 6 ամիս ժամկետով շուրջօրյա խնամքը, նրանց ընտանիքների անդամների համար սոցիալ-հոգեբանական աշխատանքներ, երեխայի նյութական ու կենցաղային պահանջների բավարարումը, կրթությանն ու դաստիարակությանն օժանդակելը, շուրջօրյա խնամքի ծառայությունների վեցամսյա ժամկետը լրանալուց հետո, ելնելով երեխայի լավագույն շահից, երեխայի հետագա խնամքի ձևը սահմանելու վերաբերյալ մասնագիտական եզրակացության ներկայացումը, երեխային և ընտանիքին տրամադրվող աջակցության արդյունավետության բարձրացմանն ուղղված ուսումնամեթոդական ձեռնարկների, ուղեցույցների, աշխատանքային նյութերի մշակումը, մեթոդական աջակցության տրամադրումը, վերապատրաստումների իրականացումը, առաջին բժշկական օգնության ծառայության և խնամքի ապահովումը՝ մինչև երեխային ծնողին վերադարձնելը կամ երեխայի նկատմամբ խնամակալ կամ հոգաբարձու նշանակելը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ մանկատանը տեղավորելը, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 2-18 տարեկան երեխաների ցերեկային խնամքը, նրանց ընտանիքի անդամների համար սոցիալ-հոգեբանական աշխատանքների իրականացումը, երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն աջակցման ապահովում՝ սույն պայմանագրի անբաժանելի մասեր կազմող N 1 հավելվածով նախատեսված Միջոցառումներին (այսուհետ՝ Միջոցառումներ) համապատասխան, N 2 հավելվածով սահմանված ֆինանսական ցուցանիշների, բարեգործական և այլ միջոցների շրջանակներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Նախարարությունն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ ստուգել Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի բնականոն գործունեությանը.

2.1.2. սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Միջոցառումների պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունել իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջել վճարել սույն պայմանագրի 6.1 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Կազմակերպությունը ժամանակին չի սկսում իրականացվող Միջոցառումները, կամ դրա իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Միջոցառումների պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված Միջոցառումների արդյունքը Նախարարության կողմից ընդունվելու դեպքում պահանջել վճարելու իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Նախարարության կողմից գումարները չվճարելու դեպքում միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Նախարարությունը պարտավոր է՝

2.3.1. սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը.

2.3.2. անհրաժեշտությամբ պայմանավորված կատարել առանձին Միջոցառումների իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ:

2.3.3. սույն պայմանագրի N 1 հավելվածի ձևաչափով նախատեսած միջոցառումների իրականացման մասին ներկայացված կատարողական ամսական հաշվետվության վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել (դրական/բացասական եզրակացություն) պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսած միջոցառումների և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են, որի համար տրվում է Եզրակացություն՝ համաձայն N 6 հավելվածի:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. սույն պայմանագրով Նախարարության կողմից տրամադրված գումարների հաշվառումն իրականացնել՝ հաշվապահական հաշվառման մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան.

2.4.2. Միջոցառումների իրականացման նպատակով ֆինանսական միջոցներն օգտագործել սույն պայմանագրի N 2 հավելվածով նախատեսված ֆինանսական ցուցանիշներին համապատասխան.

2.4.3. կատարել Նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. Նախարարությանը ներկայացնել կազմակերպությունում հաշվետու ժամանակաշրջանում փաստացի խնամվողների թվաքանակի շարժի վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն սույն պայմանագրի N 3 հավելվածի.

2.4.5. Նախարարությանը ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում փոխհատուցման ենթակա ֆինանսական միջոցների վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի N 5 հրամանով սահմանված տնտեսագիտական դասակարգման անալիտիկ հաշվառմամբ հաշվետվությունը՝ համաձայն սույն պայմանագրի N 4 հավելվածի.

2.4.6. Նախարարությանը ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի N 104 հրամանով սահմանված կարգով և ժամկետներում Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ հաշվետվությունները.

2.4.7. Սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 10 օրյա ժամկետում Գլխավոր ֆինանսիստի հաստատմանը ներկայացնել ֆինանսատնտեսական գործունեության նախահաշիվը: Ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով պայմանավորված՝ համապատասխան հիմնավորումների հետ միասին, Նախահաշվի յուրաքանչյուր փոփոխություն ներկայացնել Գլխավոր ֆինանսիստի համաձայնեցմանը, այնուհետև՝ հաստատմանը.

2.4.8. 2026 թվականի ֆինանսատնտեսական գործունեության նախահաշվով նախատեսված միջոցների շրջանակներում անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերով"

2.4.9. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Միջոցառման իրականացմանը վերաբերվող փաստաթղթերին ծանոթանալու Նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.10. Նախարարության կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունելու դեպքում, Նախարարության կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները:

3. Մոնիթորինգը

3.1. Նախարարությանը միջոցառման իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով կարող է իրականացնել մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Նախարարության կամ նրա կողմից լիազորված կազմակերպության կամ անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և առաջարկություններ:

3.4. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է Միջոցառման շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Միջոցառմանն առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Հաշվետու ամսվա ավարտից հետո նախարարության պատասխանատու ստորաբաժանման կողմից տրվում է Միջոցառումների իրականացման վերաբերյալ Եզրակացություն՝ համաձայն N 6 հավելվածի:

4.2. 4.1 կետով սահմանված Եզրակացության դրական գնահատման դեպքում Կազմակերպությունը՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 17-ը, Նախարարություն է ներկայացնում հանձնման-ընդունման ակտի երկուական օրինակ՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 5 հավելվածի:

4.3. Կազմակերպությունը՝ հանձնման-ընդունման ակտի հետ միաժամանակ Նախարարություն է ներկայացնում խնամվողների թվաքանակի շարժի և փոխհատուցման ենթակա ֆինանսական միջոցների վերաբերյալ հաշվետվությունները՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասեր կազմող N 3 և 4 հավելվածների:

4.4. Նախարարությունը՝ հանձնման-ընդունման ակտը ստանալու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում իր կողմից ստորագրված և կնքված հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը ներկայացնում է Կազմակերպությանը, իսկ չստորագրման դեպքում՝ դրա պատճառաբանված մերժումը.

4.5. Կազմակերպության կողմից իրականացված Միջոցառումների արդյունքը Նախարարության պատասխանատու ստորաբաժանումների կողմից գնահատվում է սույն պայմանագրի N 1 հավելվածին կից Ձևաչափի, ինչպես նաև ՀՀ ԱՍՀՆ 22.06.2016թ. N 69-Ա/1 հրամանի 2.10 կետի, նույն հրամանի N 3 հավելվածով հաստատված եռամսյակային հաշվետվության հիման վրա: Միջոցառումների իրականացման 75% և ավել արդյունքի դեպքում պատասխանատու ստորաբաժանումը տալիս է դրական եզրակացություն՝ համաձայն N 6 հավելվածի: 75% -ից ցածր արդյունքի դեպքում, սույն պայմանագիրը ենթակա է վերանայման:

4.6. ՀՀ կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի N1910-Ն որոշման 4-րդ կետի 13-րդ ենթակետով պայմանավորված՝ կազմակերպության կողմից պայմանագրով նախատեսված տարեկան աշխատանքների արդյունքում առաջացած տնտեսումները (խնայողությունները) վերադարձվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2027 թվականի հունվարի 24-ը:

5. Պայմանագրի գինը

5.1. Սույն պայմանագրի տարեկան գինը՝ 248,912,400 (երկու հարյուր քառասունութ միլիոն ինը հարյուր տասներկու հազար չորս հարյուր) ՀՀ դրամ: Պայմանագրի գինն իր մեջ ներառում է Կազմակերպության կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ ներառյալ նաև բոլոր հարկերը, տուրքերն ու պարտադիր այլ վճարները:

5.1.1. Պայմանագրի տարեկան գինը կողմերի համաձայնությամբ կվերանայվի լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համար:

5.2. Կազմակերպության հետ պայմանագիր կնքելուց հետո կազմակերպությանը տրամադրվում է կանխավճար՝ պայմանագրի գնի 1/12-րդ չափով, դեկտեմբեր ամսին մարելու պայմանով:

5.3. Պայմանագրի գինը իր մեջ ներառում է փոփոխուն և հաստատուն ծախսեր.

5.3.1. փոփոխուն ծախսերի գծով դրամաշնորհի չափը կազմում է 51,068,800 (հիսունմեկ միլիոն վաթսունութ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, որից

_ Շուրջօրյա խնամքի գծով սննդամթերքի ծախս՝ 34,426,800 (երեսունչորս միլիոն չորս հարյուր քսանվեց հազար ութ հարյուր) ՀՀ դրամ: Ընդ որում մեկ շահառուի հաշվարկով մատուցված ծառայության մեկ օրվա գինը կազմում է 1572 դրամ:

_ Ցերեկային խնամքի գծով հանրային սննդի նյութերի չափը՝ 14,112,000 (տասնչորս միլիոն մեկ հարյուր տասներկու հազար) ՀՀ դրամ: Ընդ որում, մեկ խնամվողի հաշվարկով մեկ օրվա գինը կազմում է 560 ՀՀ դրամ:

_ Ցերեկային խնամքի գծով երեխաների ուղեվարձ 2,530,000 (երկու միլիոն հինգ հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ: Ընդ որում, մեկ խնամվողի հաշվարկով մեկ օրվա գինը կազմում է 200 ՀՀ դրամ:

5.3.2. հաստատուն ծախսերի գծով դրամաշնորհի չափը կազմում է 197,843,600 (մեկ հարյուր իննսունյոթ միլիոն ութ հարյուր քառասուներեք հազար վեց հարյուր) ՀՀ դրամ:

5.4. Սույն պայմանագրի գինը կարող է փոփոխվել երկկողմ համաձայնությամբ՝ սույն պայմանագրի 8.3 կետի համաձայն նոր համաձայնագիր կնքելու դեպքում:

5.5. Նախարարությունը՝ Կազմակերպության կողմից իրականացված Միջոցառումների դիմաց փոխհատուցում է անկանխիկ՝ իր գանձապետական հաշվից գումարը Կազմակերպության գանձապետական հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է սույն պայմանագրին կից N 5 հավելվածով սահմանված «Հանձնման-ընդունման» երկկողմանի ստորագրված ակտի հիման վրա, սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված ֆինանսական միջոցների սահմաններում, բայց ոչ ավելի քան տվյալ ժամանակահատվածի (տարեսկզբից աճողական) համար նախատեսված գումարի չափից: Հաշվետու ժամանակահատվածում իրականացված Միջոցառումների դիմաց փոխհատուցվող գումարի չափը սույն պայմանագրի N 2 հավելվածով նախատեսված գումարի չափը գերազանցելու դեպքում, վճարումն իրականացվում է այն եռամսյակում, որում դրամական միջոցները նախատեսված են:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է Նախարարությանը փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Նախարարությունը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված

պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է 2025թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար:

8.2. Սույն պայմանագրից ծագած՝ կողմերի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցմամբ, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց կողմերի գրավոր համաձայնության:

8.3. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր (համաձայնագրեր) կնքելու միջոցով, որը (որոնք) կհանդիսանա (կհանդիսանան) սույն պայմանագրի անբաժանելի մասը (մասերը):

8.4. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով.

8.5. Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, 2, 3.1, 3.2, 4, 5, 6 հավելվածները բաղկացած են 14 էջից և համարվում են սույն պայմանագրի անբաժանելի մասերը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները եվ ստորագրությունները

Նախարարություն՝	**Կազմակերպություն՝**
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ք. Երևան, Կառավարական տուն-3 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011216471 ՀՎՀՀ 01506515 Նախարարության գլխավոր քարտուղար՝ _____Ա. Մանգասարյան (ստորագրություն) Կ. S.	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ ք. Գյումրի, Անանիա Շիրակացու 10 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն ՀՀ 900218000884 ՀՎՀՀ 05552136 Կազմակերպության տնօրեն՝ _____Ա. Ղուկասյան (ստորագրություն) Կ. S.

N 1 Հավելվա
202___թ.«____»«_____» կնքվա
N ԴՏՊ – Ծ1141.Մ11007/26-2 պայմանագ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐԵՐ

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Շիրակ մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունն իրականացնում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 0-18 տարեկան երեխաների առավելագույն 6 ամիս ժամկետով շուրջօրյա խնամքը, նրանց ընտանիքների անդամների համար սոցիալ-հոգեբանակա աշխատանքներ, երեխայի նյութական ու կենցաղային պահանջների բավարարումը, կրթությանն դաստիարակությանն օժանդակելը, շուրջօրյա խնամքի ծառայությունների վեցամսյա ժամկետը լրանալո հետո, ելնելով երեխայի լավագույն շահից, երեխայի հետագա խնամքի ձևը սահմանելու վերաբերյ մասնագիտական եզրակացության ներկայացումը, երեխային և ընտանիքին տրամադրվող աջակցությա արդյունավետության բարձրացմանն ուղղված ուսումնամեթոդական ձեռնարկների, ուղեցույցներ աշխատանքային նյութերի մշակումը, մեթոդական աջակցության տրամադրումը, վերապատրաստումներ իրականացումը, առաջին բժշկական օգնության ծառայության և խնամքի ապահովումը՝ մինչև երեխայ ծնողին վերադարձնելը կամ երեխայի նկատմամբ խնամակալ կամ հոգաբարձու նշանակելը, իսկ դր անհնարինության դեպքում՝ մանկատանը տեղավորելը, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակո հայտնված 2-18 տարեկան երեխաների ցերեկային խնամքը, նրանց ընտանիքի անդամների համար սոցիս հոգեբանական աշխատանքների իրականացումը, երեխայի իրավունքների և օրինական շահե պաշտպանությանն աջակցելը:

Կազմակերպությունն իրականացնում է 160 երեխայի խնամք՝ այդ թվում՝ կյանքի դժվար իրավիճակում հայտնված 60 երեխաների դեպքում՝ շուրջօրյա խնամք, իսկ 100 երեխայի դեպքո ցերեկային խնամք, ընդհանուր՝ 106.42 հաստիքային միավորի միջոցով:

NN ը/կ	Իրականացվելիք միջոցառման					
	Անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնաժամկետը	Պահա գում
1.	«Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին՝ երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոններում ծառայությունների տրամադրում» միջոցառում	Կազմակերպության գործունեության նպատակն է. 1) իրականացնել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված մինչև 18 տարեկան երեխաների կարճաժամկետ շուրջօրյա խնամքը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, 2) կազմակերպել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 2-18 տարեկան երեխաներին ցերեկային աջակցության ծառայությունների տրամադրումը,	Համաձայն «Երեխայի իրավունքների և երեխայի պաշտպանության համակարգի մասին» ՀՀ օրենքի և «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի, ԱՍՀ նախարարի 2021 թվականի մայիսի 26-ի N 77-Ա/1 հրամանի՝ Երեխաների աջակցության կենտրոնը. 1) իրականացնում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների ժամանակավոր խնամքը, 2) Կազմակերպում է կյանքի դժվարին իրավիճակում	1. Երեխաների ընդունելությունը, հաշվառումը, խնամքի ծառայությունների տրամադրումը և դուրսգրումը իրականացվում է ՀՀ կառավարության 2025 թ. նոյեմբերի 14-ի N 1613-Ն որոշմամբ սահմանված կարգով, 2. Երեխաների խնամքը	31.12.2026 թ.	Սույն պայմ ռով նախա ած և օրենս ամբ չարգ այլ միջոց շրջա ռում

		3) նպաստել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի (ընտանիքի) հիմնական պահանջմունքների և սոցիալական կարիքների բավարարմանը, 4) խթանել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի (ընտանիքի) ներուժի և կարողությունների բացահայտումը, ինքնօգնության, ինքնորոշման ու ծագած հիմնախնդիրներն ինքնուրույն լուծելու ունակությունների զարգացումը, 5) ստեղծել պայմաններ՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի ներառումը հասարակություն ապահովելու համար, օժանդակել նրա սոցիալ-մանկավարժահոգեբանական և առողջական խնդիրների լուծմանը, 6) կանխարգելել կյանքի դժվարին իրավիճակը և սոցիալական մեկուսացումը, 7) շուրջօրյա խնամքի ծառայությունների վեցամսյա ժամկետը լրանալուց հետո, ելնելով երեխայի լավագույն շահից, ներկայացնել մասնագիտական եզրակացություն երեխայի հետագա խնամքի ձևը սահմանելու վերաբերյալ:	հայտնված, հաշմանդամություն, հոգեֆիզիկական և մտավոր զարգացման դժվարություններ ունեցող, բռնության ենթարկված, հակասոցիալական վարք դրսևորող, սոցիալապես անապահով, անօթևան, կոնֆլիկտային կամ արտակարգ իրավիճակներում հայտնված ընտանիքների մինչև 18 տարեկան երեխաների, ինչպես նաև նրանց ծնողների /խնամքն իրականացնող անձի/ ընդունելությունը և տեղավորումը՝ 24-ժամյա աշխատանքային ռեժիմով: 3) Կազմակերպում է մինչև 18 տարեկան կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների (մինչև 6 ամիս) և երեխայի հետ ծնողների /խնամքն իրականացնող անձի/ (մինչև 1 ամիս) շուրջօրյա ժամանակավոր որակյալ խնամքը՝ կարիքին համապատասխան: 4) Տրամադրում է ցերեկային աջակցություն 2-18 տարեկան կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին՝ սոցիալ-հոգեբանամանկավարժական, թերապևտիկ, իրավախորհրդատվական, առաջին բժշկական օգնության, սննդի և այլ անհրաժեշտ ծառայությունների տեսքով: 5) Կարիքների գնահատման արդյունքների հաշվի առնմամբ՝ մշակում է երեխայի անհատական սոցիալական ծրագիր և իրականացնում սահմանված միջոցառումները, 6) Խնամակալության և հոգաբարձության	կազմակերպվում է 2020 թվականի նոյեմբերի 26-ի N 1878-Ն որոշման և նախարարի 2021 թվականի մայիսի 26-ի N 77-Ա/1 հրամանի 3. Համաձայն ՀՀ կառավարության 2025 թ. նոյեմբերի 14-ի N 1613-Ն որոշման իրականացվում է՝ 1) Երեխայի խնամքի կազմակերպումն ընտանեկանին հնարավորինս մոտ պայմաններում (հանգստի սենյակի, դասապատրաստման, անձնական իրերի համար նախատեսված պայմաններ): 2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով երեխայի պաշտպանվածությունը՝ ա) հոգեբանական և ֆիզիկական բռնությունից, այդ թվում՝ սեռական շահագործումից և այլասերումից, բ) դաժան վերաբերմունքից,	

			մարմինների, մարզպետարանների ոլորտային բաժինների, Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների, ինչպես նաև բազմամասնագիտական թիմի հետ քննարկում է երեխային կենսաբանական ընտանիք վերադարձնելու կամ ընտանիքից առանձնացնելու խնդիրները, ինչպես նաև ընտանիքին աջակցելու ուղիները: 7) Կազմակերպում է երեխայի կրթությունը նախադպրոցական, հանրակրթական կամ միջին և նախնական մասնագիտական ուսումնական հաստատություններում, ինչպես նաև նպաստում է երեխայի՝ հնարավոր բարձրագույն կրթությանը նախապատրաստվելուն: 8) Նպաստում է երեխայի՝ հաստատությունից դուրս սոցիալ-մշակութային միջոցառումների մասնակցությանը՝ ուղղված նրա սոցիալականացմանն ու ներառմանը հասարակությունում: 9) Կազմակերպում է երեխայի կենցաղային սպասարկումը, ապահովում է խնամքի համար անհրաժեշտ բոլոր պարագաներով, իսկ ցերեկային խնամքի դեպքում՝ տրամադրում է հագուստ, կոշիկ և գրենական պիտույքներ: 10) Ապահովում է համապատասխան սննդով՝ ելնելով երեխայի տարիքից և առողջական վիճակից, խնամքի ձևից: 11) Համագործակցում է երեխաների հիմնախնդիրներով զբաղվող	գ) աշխատանքի շահագործումից, դ) հանցագործություններից, ե) անուշադրությունից և անարդարությունից, զ) առողջությունը վտանգող նյութերից և կյանքը վտանգող պայմաններից 5. Արդյունքային ցուցանիշներն են՝ ա) Հանրակրթական դպրոց, խմբակներ, մշակութային միջոցառումներում ընդգրկված երեխաների թիվը: բ) Հատուկ դեպքերում տարհանման հնարավորությունների, պետական կազմակերպությանը հարող տարածքի, արտակարգ իրավիճակներում ժամանակին օգնություն ցուցաբերելու, պաշտպանելու և այլնի մասին երեխաներին անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրելուն ուղղված իրականացված միջոցառումներ: գ) Համաձայն 2007թ. N 815-Ն որոշման՝ Երեխան		

			տեղական ինքնակառավարման, պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների հետ: 12) Ապահովում է սանիհիգիենիկ, հակահամաճարակային պաշտպանության միջոցառումների իրականացումը, 13) Կազմակերպում է մասնագիտական խորհրդատվական աշխատանքներ՝ ուղղված աշխատակազմի գիտելիքների, կարողությունների և որակավորման բարձրացմանը: 14) Իրականացնում է անհատական և խմբային աշխատանքներ երեխայի ընտանիքի անդամների հետ՝ ծնողավարման և կենցաղավարման հմտությունների զարգացման ուղղությամբ, կազմակերպում է մասնագիտական խորհրդատվական աշխատանքներ և անհրաժեշտ ուղղորդումներ: 15) Բացառիկ դեպքերում լիազոր մարմնի թույլտվությամբ իրականացնում է երեխայի /խնամքն իրականացնող անձի/ շուրջօրյա խնամքի ժամկետի երկարաձգում՝ ելնելով անհրաժեշտությունից՝ միաժամանակ ներկայացնելով հիմնավորում աշխատանքների ընթացքի և ակնկալվող արդյունքների մասին: 16) Կազմակերպությունում ցերեկային ծառայություն ստացող երեխայի օրինական ներկայացուցչի հետ կնքում է պայմանագիր՝ երեխային խնամք տրամադրելու վերաբերյալ,	ապահովված է առողջ, անհրաժեշտ քանակությամբ և տարիքին համապատասխան սննդով, մահճակալով և անհրաժեշտ այլ կահույքով, դ) առկա է երեխայի սոցիալ-հոգեբանական անհատական ծրագիրը առկայությունը: ե) պահպանված են ՀՀ օրենսդրության համապատասխան սանիտարահիգիենիկ նորմերը: զ) իրականացվում են երեխայի առողջ ապրելակերպի (սնունդ, սպորտ, անձնական հիգիենա, ազատ ժամանց) համար անհրաժեշտ միջոցառումներ է) 16-ից 18 տարեկան երեխաների մասնագիտական կողմնորոշմանն ուղղված միջոցառումներ: ը) Սոցիալ-հոգեբանական աշխատանքների արդյունքում դժվարին իրավիճակը հաղթահարած երեխաների թիվ: թ) Կազմակերպության վերապատրաստված մասնագետների թիվ:		

			17) Կազմակերպությունում ցերեկային խնամքի ծառայությունից օգտվող հաշմանդամություն ունեցող երեխաների համար, ինչպես նաև կենտրոնից առնվազն 500 մետր հեռավորությամբ բնակվող տրանսպորտից օգտվող երեխաների համար կենտրոնն ապահովում է տրանսպորտի ծախսերի դրամական փոխհատուցում՝ գործող սակագներին համապատասխան: 18) Իրականացնում է կազմակերպության աշխատողների (բազմամասնագիտական թիմի) կարողությունների և հմտությունների զարգացմանն ու փորձի փոխանակմանն ուղղված շարունակական աշխատանքներ, 19) Իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և կազմակերպության կանոնադրությամբ սահմանված այլ գործառույթներ:			

*Նշված բոլոր արդյունքային ցուցանիշների կատարողականը գնահատվում է ՀՀ աշխատանքի սոցիալական հարցերի նախարարության պատասխանատու ստորաբաժանման կողմից՝ միջոցառումնե իրականացման մասին կից ձևաչափով ներկայացված ամսական բովանդակային հաշվետվությ համաձայն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016թ. հունիսի 22-ի N 69-Ա/1 հրամա 2.10 կետին և նույն հրամանի N 3 հավելվածով հաստատված եռամսյակային հաշվետվության, ինչպես նաև նախարարության կողմից իրականացված մշտադիտարկման արդյունքների վերլուծության հիման վր որոնք հիմք են հանդիսանում Կազմակերպության

տնօրենի աշխատանքը գնահատելու, ինչպես նաև Կազմակերպության որակական ցուցանիշնե կատարողական արդյունքների հետագա բարելավման համար:

Կազմակերպության տնօրենի աշխատանքը գնահատվում է բավարար, եթե վերը նշված արդյունքայ բոլոր ցուցանիշները, ըստ ներկայացված եռամսյակային հաշվետվության, կատարվել են նվազագույնը 75 ով, շուրջօրյա խնամքի դեպքում՝ անկախ խնամք ստացող շահառուների թվի:

ՁԵՎԱՉԱՓ

ՇՈՒՐՋՕՐՅԱ ԽՆԱՄՔԻ ԱՄԵՆԱՄՍՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

Հ/Հ	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Արդյունքային ցուցանիշներ
	Արդյունքային ցուցանիշ ամսվա վերջին օրվա դրությամբ	
1	Շահառուների թվաքանակ	
	Այդ թվում՝ շուրջօրյա խնամք ստացող	
	Այդ թվում՝ աղջիկների թիվ	
	Արդյունքային ցուցանիշ հաշվետու ժամանակահատվածի ընթացքում	
2	Հաստատություն ընդունված շահառուների թիվ	
	Այդ թվում՝ աղջիկների թիվ	
3	Հաշմանդամություն ունեցող երեխաների թիվ՝	
	Այդ թվում՝ աղջիկների թիվ	
4	Անհատական սոցիալական ծրագրերով ապահովված երեխաների թիվ	
5	ԿԱՊԿ գնահատում անցած երեխաների թիվ	
6	Նախադպրոցական ուսումնական հաստատություն հաճախող երեխաների թիվ	
7	Կրթություն ստացող երեխաների թիվ	
	Այդ թվում՝ հանրակրթական հիմնական, միջնակարգ կամ ավագ դպրոցում սովորող երեխաների թիվ	
	Հատուկ դպրոցում սովորող երեխաների թիվ	
	Տնային ուսուցման մեջ ընդգրկված երեխաների թիվ	
8	15 և բարձր տարիքի երեխաների թիվ	
	Այդ թվում մասնագիտական կողմնորոշում ունեցող երեխաների թիվ	
9	Խմբակներում ընդգրկված երեխաների թիվ՝ այդ թվում՝	
	Հաստատության ներսում գործող խմբակներում ընդգրկված երեխաների թիվն ըստ խմբակների (նշել խմբակների ամբողջական անվանումները և դրանցից յուրաքանչյուրում ընդգրված երեխաների թիվը)	
	Հաստատությունից դուրս գործող խմբակներում ընդգրկված երեխաների թիվն ըստ խմբակների (նշել խմբակների ամբողջական անվանումները և դրանցից յուրաքանչյուրում ընդգրված երեխաների թիվը)	
10	Վարքային խնդիրներ ունեցող երեխաների թիվ	
11	Հոգեբանական ծառայություններ ստացած երեխաների թիվ	
12	Սոցիալ-մանկավարժական, սոցիալ-իրավաբանական ծառայություն ստացած երեխաների թիվ	
13	Ծնողներին տրամադրված ծառայություններ (նշել ծառայությունների տեսակները)	
14	Ծառայություններ ստացած ծնողների թիվ	
15	Ծնողների համար կազմակերպված դասընթացների թիվ,	
	Այդ թվում՝ դասընթացներին մասնակցած ծնողների թիվն դասընթացների թեմաների (նշել դասընթացի ամբողջական անվանումը և դրան մասնակցած ծնողների թիվը)	
16	Ծառայություններ ստացած բռնության ենթարկված երեխաների թիվ	
17	Կազմակերպությունից դուրս բժշկական միջամտություն ստացած երեխաների թիվ՝ հաշվետու ժամանակահատվածում	
18	Հոգեկան առողջության կենտրոն հոսպիտալացված երեխաների թիվ	
19	Մերձավոր ազգականների, ծնողների հետ հանդիպում ունեցած երեխաների թիվ	

20	Կենսաբանական ընտանիքների հետ վերամիավորման նպատակով գնահատված երեխաների թիվ	
21	Հաստատությունից դուրսգրված շահառուների թիվ	
	Այդ թվում՝	
	Կենսաբանական ընտանիքների հետ միավորված երեխաների թիվ	
	Որդեգրվածներ	
	Այդ թվում՝ աղջիկների թիվ	
	Խնամատար ընտանիքներ տեղափոխված երեխաների թիվ	
	Այդ թվում՝ աղջիկների թիվ	
	Խնամակալ ընտանիքներ տեղափոխված երեխաների թիվ	
	Այդ թվում՝ աղջիկների թիվ	
	Այլ հաստատություններ տեղափոխված շահառուների թիվ	
	Շրջանավարտ լինելու հիմքով դուրսգրված և անկախ կյանքի անցած շահառուների թիվ	
	Մահացածների թիվ	
22	Հաստատությունում գրանցված բռնության դեպքերի թիվ	
	Երեխաների միջև (նշել դեպքերի թիվն ըստ բռնության տեսանկների)	
	Անձնակազմի կողմից (նշել դեպքերի թիվն ըստ բռնության տեսանկների)	
23	Վերապատրաստում անցած աշխատակիցների թիվ	
24	Իրականացված մշակութային և հասարակական միջոցառումների թիվ	

ՁԵՎԱՉԱՓ

ՑԵՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՍՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

Հ/Հ	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Արդյունքային ցուցանիշներ
	Արդյունքային ցուցանիշ ամսվա սկզբում և վերջին օրվա դրությամբ	
1	Շահառուների փաստացի թվաքանակ	
	Այդ թվում՝ աղջիկների թիվ	
	Արդյունքային ցուցանիշ հաշվետու ժամանակահատվածի ընթացքում	
2	Հաշմանդամություն ունեցող երեխաների թիվ՝	
	Այդ թվում՝ աղջիկների թիվ	
3	Անհատական սոցիալական ծրագրերով ապահովված շահառուների թիվ	
4	ԿԱՊԿ գնահատում ունեցող երեխաների թիվ	
5	Նախադպրոցական ուսումնական հաստատություն հաճախող երեխաների թիվ	
6	Դպրոցում սովորող երեխաների թիվ	
	Այդ թվում՝ հատուկ դպրոցում սովորող երեխաների թիվ	
7	Արտակենտրոն ծառայություն ստացող երեխաների թիվ	
8	15 և բարձր տարիքի երեխաների թիվ	
	Այդ թվում մասնագիտական կողմնորոշում ունեցող երեխաների թիվ	
9	Հաստատության ներսում գործող խմբակներում ընդգրկված երեխաների թիվն ըստ խմբակների (նշել խմբակների ամբողջական անվանումները և դրանցից յուրաքանչյուրում ընդգրված երեխաների թիվը)	
	Հաստատությունից դուրս գործող խմբակներում ընդգրկված երեխաների թիվն ըստ խմբակների (նշել խմբակների ամբողջական	

	անվանումները և դրանցից յուրաքանչյուրում ընդգրված երեխաների թիվը)	
10	Վարքային խնդիրներ ունեցող երեխաների թիվ	
11	Հոգեբանական ծառայություններ ստացած երեխաների թիվ	
12	Վերականգնողական վարժանքներով (օկուպացիոն) թերապիա ստացած երեխաների թիվ	
13	Սոցիալ-մանկավարժական, սոցիալ-իրավաբանական ծառայություն ստացած երեխաների թիվ	
14	Ծնողներին/օրինական ներկայացուցիչներին, ընտանիքի անդամներին տրամադրված ծառայություններ (նշել ծառայությունների տեսակները)	
15	Ծառայություններ ստացած ծնողների/օրինական ներկայացուցիչների թիվ	
16	Ծնողների/օրինական ներկայացուցիչների, ընտանիքի անդամների համար կազմակերպված դասընթացների թիվ	
	Այդ թվում՝ դասընթացներին մասնակցած ծնողների/օրինական ներկայացուցիչների, ընտանիքի անդամների թիվն ըստ դասընթացների թեմաների (նշել դասընթացի ամբողջական անվանումը և դրան մասնակցած ծնողների թիվը)	
17	Ծառայություններ ստացած բռնության ենթարկված երեխաների թիվ	
18	Վերապատրաստում անցած աշխատակիցների թիվ	
19	Իրականացված մշակութային և հասարակական միջոցառումների թիվ	

Նախարարություն՝	**Կազմակերպություն՝**
Նախարարության գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Ա. Մանգասարյան	_____ Ա. Ղուկասյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ. Տ.	Կ. Տ.

N2 Հավելված
2026թ.«__»«_____» կնքված
N ԴՏՊ- Ծ1141.Մ11007/26-2 պայմանագրի

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի 1141 «Երեխաների հիմնահարցեր» ծրագրի 11007 «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին ժամանակավոր խնամքի տրամադրման ծառայություններ» միջոցառման շրջանակներում «Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ին դրամաշնորհի տրամադրման համար սահմանվող

1	Շահառուների միջին ամսական թվաքանակը, որից	150	շահառու
1.1	Շուրջօրյա խնամքի շահառուների միջին ամսական թվաքանակը	60	շահառու
1.2	Ցերեկային խնամքի շահառուների միջին ամսական թվաքանակը	100	շահառու
2	Հաստիքային միավորների թվաքանակը	106.42	հաստիքային միավոր
3	**Փոփոխուն ծախս՝ սնունդ, որից**		
3.1	**Սնունդ շուրջօրյա խնամքի համար**		
	Կենտրոնում մատուցվելիք ծառայության մարդ/օրերի տարեկան քանակը	21900	մարդ/օր
	Մեկ շահառուի հաշվարկով մատուցված ծառայության մեկ օրվա գինը	1572	ՀՀ դրամ
	Սննդամթերքի ծախս	**34,426.8**	հազար դրամ
3.2	**Սնունդ ցերեկային խնամքի համար**		
	Կենտրոնում մատուցվելիք ծառայության մարդ/օրերի տարեկան քանակը	25200	մարդ/օր
	Մեկ շահառուի հաշվարկով մատուցված ծառայության մեկ օրվա գինը	560	ՀՀ դրամ
	Սննդամթերքի ծախս	**14,112.0**	հազար դրամ
4	**Փոփոխուն ծախս՝ երեխաների ուղեվարձ**		
	Ուղեվարձից օգտվող երեխաների ամսական թվաքանակը	50	շահառու
	Ուղեվարձից օգտվող երեխաների մեկ օրվա ուղեվարձի գինը	գործող սակագներին համապատասխան	ՀՀ դրամ
	Երեխաների ուղեվարձ	**2,530.0**	հազար դրամ
5	**Ընդամենը՝ փոփոխուն ծախսեր**	**51,068.8**	**հազար դրամ**
6	**Հաստատուն ծախսեր**	**197,843.6**	**հազար դրամ**
7	**Տրամադրվող դրամաշնորհի չափը**	**248,912.4**	**հազար դրամ**

այդ թվում՝

Փոփոխուն ծախսեր՝ սնունդ

Մենդի սահմանային չափաքանակները՝ ըստ ծախսերի տնտեսագիտական ծածկագրի

Ապրանքի նվանումը	Տնտեսագիտական դասակարգման սինթետիկ հաշիվների անվանումը	Ծածկագիրը	Մեկ օրվա չափաքանակը մեկ շահառուի հաշվով (դրամ)	Տարեկան չափաքանակը (հազ. դրամ)
Սննդամթերք (շուրջօրյա խնամքի համար)	Կենցաղային և հանրային սննդի նյութեր	426700	1572	34426.8
Սննդամթերք (ցերեկային խնամքի համար)	Կենցաղային և հանրային սննդի նյութեր	426700	560	14112.0

Փոփոխուն ծախսեր՝ երեխաների ուղեվարձ

Երեխաների ուղեվարձերի սահմանային չափաքանակները՝ ըստ ծախսերի տնտեսագիտական ծածկագրի.

Անվանումը	Տնտեսագիտական դասակարգման սինթետիկ հաշիվների անվանումը	Ծածկագիրը	Մեկ օրվա չափաքանակը մեկ շահառուի հաշվով (դրամ)	Տարեկան չափաքանակը (հազ. դրամ)
Երեխաների ուղեվարձ	Այլ տրանսպորտային ծախսեր	422900	գործող սակագներին համապատասխան	2,530.0

Հաստատուն ծախսերի գծով

Կատարվելիք հաստատուն ծախսերի սահմանային չափաքանակները՝ ըստ ծախսերի տնտեսագիտական տարրերի.

Տնտեսագիտական դասակարգման կատեգորիաների անվանումը	Ծածկագիրը	Տարեկան չափաքանակը (հազ.դրամ)
Աշխատանքի վարձատրություն	410000	167,995.9
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	420000	28,347.7
Այլ ծախսեր	480000	1,500.0
Ընդամենը		***197,843.6***

Դրամաշնորհի տրամադրման ժամանակացույց.

Ամիսները	Ընդամենը (հազ.դրամ)	Ամիսները	Ընդամենը (հազ.դրամ)
հունվար	20,742.7	հուլիս	145,198.9
փետրվար	41,485.4	օգոստոս	165,941.6
մարտ	62,228.1	սեպտեմբեր	186,684.3
ապրիլ	82,970.8	հոկտեմբեր	207,427.0
մայիս	103,713.5	նոյեմբեր	228,169.7
հունիս	124,456.2	դեկտեմբեր	248,912.4
Ընդամենը			***248,912.4***

Նախարարություն

Նախարարության գլխավոր քարտուղար՝

Ա. Մանգասարյան

(ստորագրություն)

Կ.Տ

Կազմակերպություն

Տնօրեն՝

Ա. Ղուկասյան

(ստորագրություն)

Կ.Տ

N3.1 Հավել
«___» «_____» 202___թ. Կնք
N ԴՏՊ – Ծ1141.Մ11007/26-2 պայմանա

Հաշվետվություն

ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի 1141 «Երեխաների հիմնահարցեր» ծրագրի 11007 «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին ժամանակավոր խնամքի տրամադրման ծառայություններ» միջոցառման շրջանակներում շուրջօրյա խնամքի իրականացման նպատակով «Շիրակի մար երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից .....ամսում փաստացի խնամվողների թվաքանակի շարժի վերաբեր

ՀՀ	Հաշվետու ժամանակաշրջանը	Հաշվետու ժամանակաշրջանի օրերի թիվը	Հաշվետու ժամանակա		Ընդունվել են	Դուրս են գրվել	այդ թվում					Ժամանակավոր բացակայող շահառուների թիվը	ժամանակավոր բացակայությունից վերադարձած շահառուների թիվը	Շահառուների թիվը հաշվետու ժամանակաշրջանի վերջում	այդ թվում		Դուրս գրված շահառուների մարդ/օրերի թիվը	ժամանակավոր բացակայող շահառուների բացակա մարդ/օրերի թիվը	Նոր ընդունված և ժամանակավոր բացակայությունից վերադարձած շահառուների մարդ/օրերի թիվը	Շահառուների փաստացի մարդ/օրերի թիվը	Հաշվետու ժամանակաշրջանում շահառուների
			Գրանցված շահառուների թիվն	Շահառուների փաստացի թիվը			վերադարձել են դպրոցներ	լրացել է 18 տարին	որդեգրվել են	տրվել են խնամատարության	տեղափոխվել են այլ հաստատություններ				տղամարդ /տղա/	կին /աղջիկ/					
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	2
1						0								0						0	#DI
	Ընդամենը	0	x	x	0	0	0	0	0	0	0	0	0	x	x	x	0	0	0	0	#DI

ՊՈԱԿ-ի տնօրեն
(ստորագրություն) (անուն,ազգանուն)
Գլխավոր հաշվապահ
(ստորագրություն) (անուն,ազգանուն)
Կ.Տ.

Նախարարություն

Նախարարության գլխավոր քարտուղար
Ա.Մանգասարյան
(ստորագրություն)
Կ.Տ

Կազմակերպություն

Տնօրեն՝
Ա. Ղուկասյան
(ստորագրություն)
Կ.Տ

N 3.2 Հավելված
«___»«_____» 202__թ. Կնքված
N ԴՏՊ – Ծ1141.Մ11007/26-2 պայմանագրի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի 1141 «Երեխաների հիմնահարցեր» ծրագրի 11007 «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին ժամանակավոր խնամքի տրամադրման ծառայություններ» միջոցառման շրջանակներում ցերեկային խնամքի իրականացման նպատակով «Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից .....ամսում փաստացի խնամվողների թվաքանակի շարժի վերաբերյալ

1 փաստացի շահառուների թվաքանակի շարժ.

ՀՀ	Հաշվետու ժամանակաշրջանը	Հաշվետու ժամանակաշրջանի օրերի թիվը	Գրանցված շահառուների թիվը հաշվետու ժամանակաշրջանի սկզբում	Ընդունվել են	Դուրս են գրվել	այդ թվում		Նոր ընդունված և ժամանակավոր/բացակայություն ից վերադարձած խնամվողների (շահառուների)	Ժամանակավոր բացակայող խնամվողների (շահառուների) թիվը բացակա մարդ/օրերի թիվը	Խնամվողների (շահառուների) փաստացի մարդ/օրերի թիվը	Հաշվետու ժամանակաշրջանում խնամվողների (շահառուների) միջին թիվը
						Տեղափոխվել են շուրջօրյա հաստատություններ					
1	2	3	4	5	6	7		8	9	10	11
1										0	#DIV/0!
Ընդամենը		0	0	0	0	0		0	0	0	#DIV/0!

3 հետազոտման համար հաշվառված ընտանիքների և այդ ընտանիքների ռիսկի գոտում հայտնված երեխաների շարժ

ՀՀ	Հաշվետու ժամանակաշրջանը	Հաշվետու ժամանակաշրջանի օրերի թիվը	Հաշվետու ժամանակաշրջանի սկզբում հետազոտման համար հաշվառված ընտանիքների և դրանց ռիսկի գոտում հայտնված երեխաների թիվը		Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում հետազոտման համար հաշվառված ընտանիքների և դրանց ռիսկի գոտում հայտնված երեխաների թիվը		Հաշվետու ժամանակաշրջանում փաստացի հետազոտվող ընտանիքների և դրանց ռիսկի գոտում հայտնված երեխաների թիվը		Հաշվետու ժամանակաշրջանում փաստացի հետազոտված ընտանիքների և դրանց ռիսկի գոտում հայտնված երեխաների թիվը		Հաշվետու ժամանակաշրջանում հետազոտության արդյունքում կազմակերպության շտեմարան ընդգրկված, ռիսկի գոտում հայտնված
			ընտանիք	երեխա	ընտանիք	երեխա	ընտանիք	երեխա	ընտանիք	երեխա	երեխա
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1											
Ընդամենը		0	x	x	0	0	0	0	0	0	0

ՊՈԱԿ-ի տնօրեն

(ստորագրություն) (անուն.ազգանուն)

Գլխավոր հաշվապահ

(ստորագրություն) (անուն.ազգանուն)

Կ.Տ.

Նախարարություն

Նախարարության գլխավոր քարտուղար

Ա. Մանգասարյան

(ստորագրություն)

Կ.Տ

Կազմակերպություն

Տնօրեն

Ա. Ղուկասյան

(ստորագրություն)

Կ.Տ

N 4 Հավելված
202___ թ.«___» «_____» կնքված
N ԴՏՊ – Ծ1141.ՄՊ1007/26-2 պայմանագրի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի 1141 Երեխաների հիմնահարցեր» ծրագրի 11007 «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին ժամանակավոր խնամքի տրամադրման ծառայություններ» միջոցառման շրջանակներում «Ճիրուսի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ին _____ ամսում փոփոխուն և հաստատուն ծախսերի գծով փոփոխությունն ենթակա գումարի վերաբերյալ

հազ.դրամ

Ծախսային հոդվածներ					Հաստատված ֆինանսական միջոցներ			Ֆակտիկական ծախսեր			
Տնտեսագիտական դասակարգման սինթետիկ հաշիվների անվանումը	Տնտեսագիտական դասակարգման անալիտիկ հաշիվների անվանումը	Նախագիծը	Հաստատված նախահաշվի գումարը	Ճշտված նախահաշվի գումարը	Նախահաշվված գումարը	Պետական բյուջեից փոփոխության ենթակա գումարը	Բարեգործական և այլ միջոցներից կատարված դրամական ծախսեր	Նախահաշվված գումարը	Պետական բյուջեից փոփոխության ենթակա գումարը	Բարեգործական և այլ միջոցներից կատարված դրամական ծախսեր	Բարեգործական կազմակերպության անխնայող
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝		x	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
Փոփոխուն ծախս			0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
Կենցաղային և հանրային սեղի նյութեր		426700	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Հումքային սեղի նյութեր (ընդգրկում խնայման հաշվով)	426720						0.0	0.0	0.0	
	Հումքային սեղի նյութեր (ընդգրկում խնայման հաշվով)	426720						0.0	0.0	0.0	
Այլ տրանսպորտային ծախսեր		422900	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Այլ գրանսպորտային ծախսեր (ընդհանրապես ուսանող)	422910						0.0	0.0	0.0	
Հաստատուն ծախս			0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ		411000	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Մշտական աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	411110									
	Ժամանակավոր աշխատողներին վճարվող աշխատավարձ	411120									
	Դեղագործի դրոշմանիշի հիման վրա վճարվող աշխատավարձ	411130									
Դարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ		411000	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Դարգևատրումներ	411210									
	Դրամական խրախուսումներ	411220									
Էներգետիկ ծառայություններ		421200	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Էներգետիկ ծառայություններ	421210									
	Ջերմության ծառայություններ	421220									
Կոմունալ ծառայություններ		421300	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ	421310									
	Այլ կոմունալ ծառայություններ	421390									
Կապի ծառայություններ		421400	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	կապի աբոնենտային ծառայություններ	421410									
	փոստական հասցեագրումների վճար										
	միջքաղաքային հեռախոսային զրույց										
	ինտերնետային կապ										
	Փոստային և սուրհանդակային վճարներ	421420									
Ապահովագրական ծախսեր		421500	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Գույքի ապահովագրություն	421510									
Գույքի և սարքավորումների վարձակալություն		421600	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Գույքի վարձակալություն	421610									
	Սարքավորումների վարձակալություն	421620									
Ներքին գործուղումներ		422100	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Ներքին գործուղումների օրապահիկ	422110									
	Ներքին գործուղումների գծով իջևանային ծախսեր	422120									
	Ներքին գործուղումների գրանցագրային ծախսեր (օդանավ, սավառնակ, գնացք և այլն)	422130									
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ		423900	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	423910									
Մասնագիտական ծառայություններ		424100	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Մասնագիտական ծառայություններ	424110									
Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում		425100	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	425110									
Մեքենաների և սարքավորումների ոչառանձին նորոգում և պահպանում		425200	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Տրանսպորտային սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	425210									
	Գրասենյակային սարքերի և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	425220									
	Այլ մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	425290									
Գրասենյակային նյութեր և հագուստ		426100	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Գրասենյակային պիտույքներ	426110									
	Հագուստ և համազգեստներ	426120									
Տրանսպորտային նյութեր		426400	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Վառելիքի ծախսեր	426410									
	Այլ նյութեր գրանսպորտային միջոցների համար	426490									
Սննդամթերքային և բաթարեղեն նյութեր		426600	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Բժշկական քսանյութերի նյութեր	426610									
Կենցաղային և հանրային սեղի նյութեր		426700	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Կենցաղային նյութեր (Մաքրիչ և հիգիենիկ նյութեր)	426710									
	Կենցաղային այլ նյութեր (Ներքնազգեստ նյութեր սեղանիներ)	426730									
Հատուկ նպատակային այլ նյութեր		426900	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Հատուկ նպատակային այլ նյութեր	426910									
Դարտադիր վճարներ		482300	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Այլ պարտադիր վճարներ	482390									
Այլ ծախսեր		486100	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Այլ ծախսեր	486110									

Տրված է՝
(ստորագրություն)
(ստորագրության գրաֆիկ)

Նախարարություն
Նախարարության գլխավոր քարտուղար՝
Ա. Մանասյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Կազմակերպություն
Ա. Դոնբասյան
(ստորագրություն)
Կ.Տ.

N 5 Հավելված
202___թ. «___» «_____» կնքված
N ԴՏՊ – Ծ1141.Մ11007/26-2 պայմանագրի

Նախարարություն՝ Կազմակերպություն

հասցե՝

հ/հ
հվհհ

հասցե՝

հ/հ
հվհհ

ԱԿՏ
Հանձնման-ընդունման

« »« » 202___թ.
Պայմանագրի անվանումը՝
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝
Պայմանագրի համարը՝

Նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար , և Կազմակերպությունն՝ ի դեմս Կազմակերպության տնօրեն , հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրով նախատեսված Միջոցառումների իրականացման վերաբերյալ, պատասխանատու ստորաբաժանման « »« » 202___թ. N եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված Միջոցառումների իրականացումը համապատասխանում է պայմանագրով նախատեսված Միջոցառումներին և տրամադրման ժամանակացույցին՝ կազմեցին սույն ակտը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կազմակերպությունը « »« » 202___թ–ից « »« » 202___թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ Միջոցառումները.

Համառոտ նկարագիրը	*Քանակը*	*Նվազագույն շահավետ գինը՝ մեկ միավորի հաշվարկով*	*Մեկ միավորի գինը*	*Մեկ միավորի համար տրամադրվող դրամաշնորհի չափը*	*Վճարման ենթակա գումարը*	*Վճարման վերջնաժամկետը ամիս, ամսաթիվը*
		(դրամ)	*(դրամ)*	*(դրամ)*	*(հազ. դրամ)*	
1	2	3	4	5=3-4	6=2x.5	7
Փոփոխուն ծախս, այդ թվում	**x**	**x**	**x**	**x**	**x**	**x**
Սնունդ երեխաների շուրջօրյա խնամքի համար	Մարդ/օր					
Սնունդ երեխաների ցերեկային խնամքի համար	Մարդ/օր					
Ուղեվարձից օգտվող երեխաների հասանելիք գումարը	Մարդ/օր					
Հաստատուն ծախս						
Ընդամենը	**x**	**x**	**x**	**x**		**x**

ընդունեց՝ հանձնեց՝

/ստորագրություն/ ազգանուն /ստորագրություն/ ազգանուն

Կ.Տ Կ.Տ.

Նախարարություն **Կազմակերպություն**

Նախարարության գլխավոր քարտուղար՝ Կազմակերպության տնօրեն՝

Ա. Մանգասարյան Ա. Ղուկասյան

(ստորագրություն) (ստորագրություն)

Կ.Տ. Կ.Տ

N 6 Հավելված
202__ թ.«___» «_____» կնքված
N ԴՏՊ – Ծ1141.Մ11007/26-2 պայմանագրի

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N __
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

« » « » 202__թ.

Պայմանագրի անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 202__թ.

Պայմանագրի համարը՝

Պատվիրատուի անվանումը՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Կատարողի անվանումը՝

Վերոհիշյալ պայմանագրի շրջանակներում Կատարողը « » « » 202__թ.-ից « » « » 202__թ.-ը ընկած ժամանակահատվածում իրականացվել է հետևյալ ծառայությունները.

ՀՀ	Մատուցված ծառայությունների					
	Աշխատանքային օրերի թիվը	Տեխնիկական բնութագրերի համառոտ շարադրանքը	Քանակական բնութագիրը		Կատարման ժամկետը	
			Ըստ պայմանագրով հաստատված ժամանակացույցի	Փաստացի	Ըստ պայմանագրով հաստատված ժամանակացույցի	Փաստացի
1		Շուրջօրյա խնամքի գծով մատուցած ծառայություններ՝ սնունդ /մարդ/օր/				
2		Ցերեկային խնամքի գծով մատուցած ծառայություններ՝ սնունդ /մարդ/օր/				
3		Ցերեկային խնամքի գծով ուղեվարձից օգտվող երեխաների մարդ/օրերի թիվը /մարդ/օր/				

Նշումներ անհամապատասխանությունների մասին ՝

Հիմք ընդունելով վերոգրյալը, տալիս եմ _____ եզրակացություն
/Դրական/բացասական/

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝

_____ վարչության պետ

Նախարարություն

Նախարարության գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մանգասարյան
(ստորագրություն)

Կ.Տ

Կազմակերպություն

Կազմակերպության տնօրեն՝

_____ Ա. Ղուկասյան
(ստորագրություն)

Կ.Տ